



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N _____

_____ 2012 թ.

Ա/Ձ Արտեմ Մարգարյանի ներկայացուցիչ
պարոն Դ.Հունանյանին

հասցե՝ ք.Երևան, Արուսյան 31, բն. 20
պատճենը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետ
պարոն Ա.Հարությունյանին

Կից ուղարկվում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտեի հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 24.03.2012թ. թիվ 10/1
որոշումը:

Առդիր՝ 2 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման
հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

«Հ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 10/1

24 մարտի 2012թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 06.03.2012թ-ի նիստում քննության է առնվել Ա/Ձ Արտեմ Մարգարյանի ներկայացուցչի 01.03.2012թ-ի թիվ 09-Դ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 29.02.2012թ. վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 178613 որոշման դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ որոշումը թողնվել է անփոփոխ:

Նշվեց նաև, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 07.03.2012թ-ի թիվ 10 որոշման համաձայն Ա/Ձ Արտեմ Մարգարյանի ներկայացուցչի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 29.02.2012թ. վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 178613 որոշման դեմ բերված 01.03.2012թ-ի թիվ 09-Դ գանգատի քննարկման և դրա վերաբերյալ որոշում ընդունելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետը երկարաձգվել է 15 օրով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 29.02.12թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 178613 որոշմամբ (այսուհետ նաև որոշում) մասնավորապես արձանագրվել է, որ Ա/Ձ Արտեմ Մարգարյանը սահմանված կարգով և ժամկետում չի վճարել հարկերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները: Արարքը որակվել է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 170.3 հոդվածի հատկանշներով և կիրառվել է նույն հոդվածով նախատեսված տուգանքը՝ գումարով 20 000 դրամ:

Ա/Ձ Արտեմ Մարգարյանի ներկայացուցչի գանգատում մասնավորապես նշված է:

Որոշման հիմքում ընկած է այն հանգամանքը, որ Արտեմ Մարգարյանն որոշակի ժամանակ չի կատարել հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ կատարելու իր պարտականությունը: Մասնավորապես, 21.12.2011թ-ի թիվ ԱՀ 014638 հանձնարարագրի համաձայն, Մյասնիկյանի ՀՏ իրավաբանական և հարկադիր գանձումների բաժնի աշխատակիցների կողմից Ա/Ձ Արտեմ Մարգարյանին պատկանող գույքի վրա 522 հազար դրամի չափով արգելանք է դրվել, որից 122 000 դրամը եկամտահարկի գծով, իսկ 400900 դրամը՝ սոցիալական վճարի գծով: Սակայն պետք է նշել, որ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ կատարելու պարտականության խախտման պատճառ է հանդիսացել այն հանգամանքը, որ այդ խախտումների ժամանակահատվածում Ա/Ձ Արտեմ Մարգարյանի առողջությանը հասցված է եղել ծանր վնաս՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանշներով: Արդյունքում, Արտեմ Մարգարյանը չի կարողացել առհասարակ ծավալել գործունեություն՝ գանձված լինելով անկողնուն և անցնելով կոնսերվատիվ և վերականգնողական բուժում: Մասնավորապես, 17.03.2012թ-ին Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը Արտեմ Մարգարյանի առողջությանը հասցված վնասի հետ կապված կայացրել է որոշում քրեական գործը վարույթ ընդունելու մասին, ինչի մասին Արտեմ Մարգարյանը ստացել է ծանուցում:

Իր բուժումն Արտեմ Մարգարյանը ստացել է Համալսարանական թիվ 1 կլինիկական հիվանդանոցում, ինչը հաստատվում է մասնավորապես՝ թիվ՝ 3875/110 էպիկրիզի միջոցով: Դրա համաձայն՝ Արտեմ Մարգարյանը դեռե՛նս հուլիս ամսին՝ 07.07.2011թ.-ին, ընդունվել է ստացիոնար բուժման ԻԹԲ, որտեղից 07.07.2011թ-ին տեղափոխվել է էնդովասկոլյար նյարդավիրաբուժության կլինիկա, որտեղից դուրս է գրվել 29.07.2011թ-ին: Որից հետո Արտեմ Մարգարյանը, հետևելով բժշկի ցուցումներին, գտնվել է նյարդաբանի հսկողության ներքո և կատարել է գլխուղեղի ԿՏ հետազոտություն:

Ղեկավարվելով Հարկերի մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 286-րդ հոդվածի 1-ին պարբերության, 286-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով դիմումատուն խնդրում է վերացնել 29.02.2012թ. Կենտրոնի ՀՏ պետի կողմից Ա/Ձ Արտեմ Մարգարյանի նկատմամբ կայացրած թիվ 178613 որոշումը, ինչպես նաև ներել Ա/Ձ Արտեմ Մարգարյանի պարտավորությունները՝ եկամտահարկի ու սոցիալական վճարների գծով, որոնք գոյացել են թիվ 178613 որոշումը կայացնելու դրությամբ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Արտեմ Մարգարյանի ներկայացուցչի և Կենտրոնի ՀՏ ներկայացուցչի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Արտեմ Մարգարյանի պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունը 10.02.2012թ-ի դրությամբ կազմել է ընդամենը 546491 դրամ, որից պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ընդամենը՝ 416297 դրամ և եկամտահարկի գծով՝ 130194 դրամ:

Ա/Ձ Արտեմ Մարգարյանի պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորությունն առաջացել է 2009 թ-ի մարտ-դեկտեմբեր և 2011թ-ի հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ մասով սահմանված ամսական նվազագույն սոցիալական ապահովության վճարների գումարները, ինչպես նաև 09.07.2010թ-ի թիվ 2320971 ստուգման ակտով լրացուցիչ գանձման առաջադրված գումարը՝ 120 000 դրամ, չվճարելու հետևանքով:

Ա/Ձ Արտեմ Մարգարյանի եկամտահարկի գծով պարտավորությունն առաջացել է 2010թ. համար տարեկան ֆիզիկական անձի պարզեցված հաշվարկով հաշվարկված 91396 դրամ եկամտահարկը չվճարելու համար:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ գործում առկա ապացույցների համաձայն, Ա/Ձ Արտեմ Մարգարյանը 07.07.2011թ-ին ընդունվել է ստացիոնար բուժման ԻԹԲ, որտեղից 07.07.2011թ-ին տեղափոխվել է էնդոկրոնոլոգիայի նյարդավիրաբուժության կլինիկա, որտեղից դուրս է գրվել 29.07.2011թ-ին: Այսինքն, Արտեմ Մարգարյանը 07.07.2011թ-ից մինչև 29.07.2011թ-ն ընկած ժամանակահատվածում գտնվել է ստացիոնար բուժման մեջ:

Վերոգրյալից հետևում է, որ Ա/Ձ Արտեմ Մարգարյանի պարտադիր սոցիալական ապահովության վճարների և եկամտահարկի գծով պարտավորություններն առաջացել են մինչև Ա/Ձ Արտեմ Մարգարյանի առողջությանը ծանր վնաս հասցված լինելու ժամանակահատվածում: Հետևապես, գանգատում բերված փաստարկը, որ վերոգրյալ պարտավորությունները չկատարելու պատճառ է հանդիսացել այդ խախտումների ժամանակահատվածում Ա/Ձ Արտեմ Մարգարյանի առողջությանը ծանր վնաս հասցված լինելու հանգամանքը, քննարկվող դեպքում չի կարող հիմնավոր համարվել:

Ինչ վերաբերում է գանգատում բերված պահանջին՝ որոշումը կայացնելու դրությամբ Ա/Ձ Արտեմ Մարգարյանի եկամտահարկի ու սոցիալական ապահովության վճարների գծով առաջացած պարտավորությունները ներելու վերաբերյալ, ապա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին, ի դեմս Հանձնաժողովի, նման լիազորություն վերապահված չէ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է հետևյալ եզրակացությունը.

Ա/Ձ Արտեմ Մարգարյանի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 2012 թվականի փետրվարի 29-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 178613 որոշման վերաբերյալ ներկայացված դիմում-գանգատը համարել ոչ հիմնավոր և համաձայնություն տալ դրա վերաբերյալ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից գանգատարկման խորհուրդ ներկայացված որոշման նախագծին:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 29.02.2012թ. վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 178613 որոշումը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տվյալ վարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի խորհրդակցել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ